ԱԶԳ

# Մարզական

## Առաջնությունը նոր մրցակարգով

ՖՈՏՈԼՈՒՐ




Շախմատիստի կենտրոնական տանը մեկնարկել է շախմատի կանանց բարձրագույն խմբի առաջնությունը, որն առաջին անգամ անց է կացվում նոկաուտ համակարգով: Հանրապետության չեմպիոնուհու կոչումը վիճարկում են 13 շախմատիստուհիներ: Նրանցից 10-ը պայքարը սկսեցին 1/8 եզրափակիչից: Ամենաբարձր ազգային անհատական վարկանիշ ունեցող գրոսմայստերներ Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը, ինչպես նաեւ հանրապետության անցյալ տարվա չեմպիոնուհի Գոհար Հլղաթյանը պայքարի մեջ ներգրավվեցին քառորդ եզրափակիչից:

Մրցակարգի համաձայն, մրցակիցները միմյանց հետ անցկացնում են դասական շախմատի կանոններով երկու պարտիա: Ոչ-ոքի արդյունքի դեպքում անց է կացվում լրացուցիչ մրցախաղ երկու պարտիայից արագ շախմատի կանոններով, իսկ հարկ եղած դեպքում հաղթողը կորոշվի կայծակնային մրցախաղում:

1/8 եզրափակիչում համառ պայքար չծավալվեց: Բոլոր 5 մրցախաղերն էլ ավարտվեցին կողմերից մեկի առավելությամբ: Միեւնույն 2-0 հաշվով Նոնա Սահակյանը հաղթեց Աննա Հայրապետյանին, Լիլիթ Գալոյանը՝ Անի Ավանեսյանին, Սիրանուշ Անդրեասյանը՝ Մարինե Դումանյանին: Նարինե Գասպարյանը 1,5-05 հաշվով պարտության մատնեց Ալլա Սահակյանին: Նույն հաշվով Նելլի Աղինյանը պայքարից դուրս մղեց Լուսինե Ալավերդյանին:

Երեկ կայացան քառորդ եզրափակիչի առաջին հանդիպումները: ՀՀ չեմպիոնուհի Գոհար Հլղաթյանը սեւերով հաղթեց Նելլի Աղինյանին, իսկ Էլինա Դանիելյանը սպիտակներով պարտության մատնեց Սիրանուշ Անդրեասյանին: Նոնա Սահակյանի եւ Լիլիթ Մկրտչյանի, Նարինե Գասպարյանի եւ Լիլիթ Գալոյանի պարտիաներում գրանցվեցին ոչ-ոքի արդյունքներ: Այսօր կկայանան քառորդ եզրափակիչի 2-րդ հանդիպումները նույն մրցակցուհիների միջեւ:

## «Բիրմինգհեմը» հեռանում է Օլիսադեբեով

Անգլիայի պրեմիեր-լիգայի նորեկ «Բիրմինգհեմը» նոր մրցաշրջանի շեմին մտադիր է իր շարքերը համալրել Լեհաստանի հավաքականի հարձակվող էմանուել Օլիսադեբեով: Նիգերական ծագում ունեցող 23-ամյա ֆուտբոլիստը չնայած իրեն այնքան էլ լավ չդրսեւորեց աշխարհի առաջնությունում՝ 3 խաղում խփելով ընդամենը մեկ գնդակ, սակայն ընտրական մրցաշարում նրա վարպետ խաղը չի մոռացվել: Օլիսադեբեն ընթացիկ մրցաշրջանում հիմնականում «Պանաթինաիկոսի» պահեստայինների թվում էր հայտնվում, այնպես որ դեմ չի լինի տեղափոխվել մառախլապատ Ալբիոն: Նրա տրանսֆերը գնահատվում է 4 մլն ֆունտ ստեռլինգ:

## Մարադոնան գոհ չէ առաջնությունից

Դիեգո Մարադոնայի կարծիքով, աշխարհի ավարտված առաջնությունը հետաքրքիր չէր, իսկ եզրափակիչ խաղն էլ բարձրակարգ ֆուտբոլով աչքի ընկած վճռորոշ հանդիպումների շարքը չէր դասվի: Ըստ նրա, Գերմանիայի ներկա հավաքականն այդ երկրի ֆուտբոլի պատմության մեջ ամենաթույլերից մեկն էր: Անցյալում գերմանացիներն ավելի ուժեղ թիմի տպավորություն էին թողնում: Մարադոնան առաջնության հերոսներ է համարում Ռիվալդոյին եւ Ռոբերտո Կառլոսին, ոչ թե Ռոնալդոյին: Ըստ նրա, բրազիլացիներն իրենցից ոչ թե ամբողջական թիմ էին ներկայացնում, այլ վառ անհատականությունների մի խումբ էին կազմում:

## ՖՈՒՏԲՈԼԻ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

## «Փյունիկը» միանձնյա առաջատար

Երեք հանդիպումներով երեկ մեկնարկեց ֆուտբոլի ՀՀ բարձրագույն խմբի առաջնության 8-րդ տուրը: Մրցապայքարից էին ելել առաջատարների խմբում ընդգրկված թիմերը: «Հանրապետական» մարզադաշտում կայացած «Ստարտակ»-«Շիրակ» հանդիպման առաջին խաղակեսում սպասված աշխույժ մրցակցությունը չստացվեց: Թիմերը գործում էին դանդաղ, առանց եռանդի, սխալվում պարզ իրադրություններում: Մինչեւ ընդմիջում մրցակիցները մեկական գնդակ փոխանակեցին: 11-րդ րոպեին հաշիվը հեռատեսի հարվածով բացեց ստարտակցի Տիգրան Հովհաննիսյանը, 45-րդ րոպեին շիրակցի Տիգրան Դավթյանը վերականգնեց հավասարակշռությունը:

Ընդմիջումից հետո խաղադաշտում ավելի սուր պայքար ծավալվեց: Այս անգամ արդեն շիրակցիները հաշվի մեջ առաջ անցան շնորհիվ Արսյոմ Հակոբյանի խփած գոլի: Սակայն հաղթական հաշիվը պահպանել չհաջողվեց: 65-րդ րոպեին Քոչարյանի բարձրից փոխանցումը գլխի հարվածով եզրափակեց Արա Հակոբյանը: Դրանից հետո երկու թիմերն էլ կարող էին կորզել հաղթանակը: Նախ Տիգրան Հովհաննիսյանի հարվածից հետո գնդակը դիպավ դարպասի հորիզոնական ձողին, ապա շիրակցիների վտանգավոր գրոհը կանխեց եզրային մրցավար Արմեն Մանուչարյանը սխալմամբ արձանագրելով «խաղից դուրս» վիճակ: Գրանցվեց ոչ-ոքի՝ 2-2: «Շիրակն» ընթացիկ մրցաշրջանում առաջին միավորը կորցրեց:

Ոսկեհասում «Միկան» հյուրընկալել էր «Փյունիկին»: Չեմպիոնն այս խաղում էլ շարունակեց իր հաղթարշավը եւ 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Գոլերի հեղինակներ դարձան Մամադուն եւ Վարդան Մինասյանը:

Աբովյանում «Արարատը» 1-0 հաշվով հաղթեց «Զվարթնոցին»: Միակ գոլի հեղինակը Դավիթ Ասրյանն է:

Այսօր կկայանան տուրի մյուս երեք հանդիպումները «Բանանց»-«Արցախ», «Լեռնագործ»-«Կոտայք», «Լոռի»-«Դինամո»:

## Եղանակն իր ուղղումներն է մտցնում

Անգլիայում սկսված անձրեւները զգալի չափով խոչընդոտում են թենիսի ուիմբլդոնյան մրցաշարի նորմալ ընթացքը՝ ստիպելով կազմակերպիչներին հետաձգել կամ անավարտ թողնել հանդիպումները: Այսպես, երկու օր շարունակ չէր հաջողվում ավարտել դեռեւս 1/8 եզրափակիչից անավարտ մնացած Կրայչեկ-Ֆիլիպուսիս մրցախաղը: Ի վերջո այն ավարտվեց հոլանդացի Կրայչեկի հաղթանակով: Անավարտ է մնացել Թիմ Հենմանի եւ Անդրե Սահի քառորդ եզրափակիչ մրցավեճը: Առաջին խաղափուլն ավարտվել է անգլիացի Հենմանի հաղթանակով (6-3): Կանայք ավելի հաջողակ գտնվեցին: Հայտնի դարձան կիսաեզրափակիչի բոլոր մասնակիցները: Նախորդ օրը կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճած Վենուս Ուիլյամսին եւ ժյուստին էնենին միացան Սերենա Ուիլյամսն ու Ամելի Մորեսմոն: Սերենան 2 խաղափուլում հաղթեց Դանիելա Հանդուխովային (6-3, 6-2), նույնպիսի հաշվով Մորեսմոն պարտության մատնեց Կապրիատիին: Կիսաեզրափակիչ զույգեր են կազմել Վենուս Ուիլյամսն ու ժյուստին էնենը, Սերենա Ուիլյամսն ու Ամելի Մորեսմոն:

Խառը զուգախաղերում առայժմ հաջող է հանդես գալիս Աննա Կուռնիկովան: Նա Յոնաս Բյորկմանի հետ կարողացավ պարտության մատնել հանրահայտ Թոդ Վուդբրիջ-Մարտինա Նավրատիլովա զույգին (3-6, 6-4, 6-2): Ի դեպ թենիսի վետերան, աշխարհահռչակ Մարտինա Նավրատիլովան, որն Ուիմբլդոնում բոլորից շատ հանդիպումներ է անցկացրել եւ վերջին տարիներին հանդես է գալիս միայն խառը զուգախաղերում, բնավ էլ մտադիր չէ ավարտել իր ելույթները: Նա նշել, որ ֆիզիկապես իրեն ավելի լավ է զգում, քան 12 տարի առաջ եւ պատրաստ է հաջորդ տարի եւս մասնակցել ուիմբլդոնյան մրցաշարին:



# Փրկվեք երեւանյան շոգից

# «ԶՎԱՐԹՆՈՑ»

«Զրաշխարհը», չնայած իր գոյության կարճատեւ շրջանին, արդեն հասցրել է դառնալ Երեւանի տեսարժան եւ երեւանցիների սիրելի վայրերից մեկը: Այս ամառ նույնպես այն սկսել է ընդունել հոգսերից ու խնդիրներից հանգստանալ ցանկացողներին, որոնց թիվը, բնականաբար, օրեցօր, շոգի սաստկացմանը զուգահեռ, ավելանալու է: Դրան նպաստելու է մուտքի գների ճկուն համակարգը, ինչի մասին տեղեկացանք «Զրաշխարհի» տնօրեն Ավետիս Զանյաշյանից: Հունիսի 29-ից մուտքի տոմսը 120 սմ-ից բարձր հասակ ունեցողների համար 3500 դրամ է, իսկ 120 սմ-ից ցածրներին 2200 դրամ: Գործելու են նաեւ հատուկ գներ, այսպես կոչված, ուղեկցող անձանց համար: Նրանք, ովքեր այստեղ կգան պարզապես իրենց երեխաներին, թոռներին կամ այլոց ուղեկցելու նպատակով եւ չեն օգտվի «Զրաշխարհի» ատրակցիոններից եւ լողավազաններից, կվճարեն ընդամենը 1200 դրամ: Այսպիսի տարբերակված գին վճարողները միմյանցից կտարբերվեն թեւկապներով: Համալիրի տնօրենը բացառեց մուտքի տոմսի ավելի ցածր գներով վաճառքը, քանի որ «Զրաշխարհի» ծախսերը մեծ են՝ ջրափոխում, ջրի մաքրման կայանի աշխատանքի, պահակազմի, փրկարարների աշխատավարձեր եւ այլն:

Տնօրենից տեղեկացանք եւս մեկ հաճելի նորույթի մասին՝ շուտով ստեղծվելու է ծածկված ջրաշխարհ: Այժմ ընթանում են շինարարական աշխատանքները, որոնց ավարտից հետո մայրաքաղաքի բնակիչներն ու հյուրերը, անկախ տարվա ժամանակից եւ եղանակից, հնարավորություն կունենան զվարճանալ եւ մոռացության տրվել «Զրաշխարհի» ալիքներին: Իսկ ներկայումս այն, ըստ Ավետիս Զանյաշյանի, օրական ընդունում է 600-800 մարդու, թեեւ հնարավորությունները շատ ավելի են՝ մինչեւ 2 հազար մարդ: Տնօրենից իմացանք նաեւ «X Group» իրավաբանական անձանց միջազգային միության (որի մեջ է մտնում «Զրաշխարհը») միջազգային ճանաչման եւ հաջողությունների մասին: X Group-ը, որն ընդգրկում է նաեւ «10-ից 10» հրածգարանը, «Լյուքս կառ սերվիսը», ծվի արտադրության մեջ մասնագիտացած Երեւանի թռչնաբուծական ֆաբրիկան, թռչնի մսի արտադրության մեջ մասնագիտացած Զրառատի «Արաքս» թռչնաֆաբրիկան, այս տարվա հունիսին արժանացել են որակի համար սահմանված միջազգային մրցանակի՝ ադամանդյա գավաթի: Ընկերության նախագահ Խաչիկ Խաչատրյանը նոր է վերադարձել Փարիզից, որտեղ էլ BID (Business International Development) կազմակերպությունը հանձնել է վերոնշյալ մրցանակը: Այս կազմակերպությունն անց է կացնում լավագույն որակի ապրանքներ եւ ծառայություններ մատուցող ընկերությունների ամենամյա մրցույթներ եւ ընտրություն:



Ամառային հանգստի ամփոփ փաթեթ է պատրաստել «Վալենսիա տուր թրավել կոմպանին» 8 օր (7 գիշեր) եւ 3 օր (2 գիշեր) ժամանակով: Տոմսի արժեքի մեջ, բացի «Վալենսիա» հյուրանոցի երկտեղանոց եւ լյուքս ընտանեկան համարներում բնակվելուց, ներառում է նաեւ «Զրաշխարհի» մուտքի տոմսը, բժշկական ապահովագրությունը «Զրաշխարհի» տարածքում: Մինչեւ 6 տարեկան երեխաների համար սենյակն անվճար է: Երեքանգամյա սննդի համար ենթադրվում է օրական հավելյալ 10 դոլարի վճարում իհարկե այդ ծառայությունից օգտվելու ցանկության դեպքում: 8-օրյա հանգիստը երկտեղանոց փոքրերում արժե 280 դոլար, իսկ լյուքս ընտանեկան (2 մեծահասակ, 2 երեխա) համարներում 490 դոլար: 3-օրյա հանգստի գները հետեւյալն են՝ երկտեղանոց փոքրերը՝ 80 դոլար, լյուքս ընտանեկանը՝ 140 դոլար:

«Վալենսիա» հյուրանոցում եւ փոքրերում ամառային հանգստի այդ օրերին այցելուները, բացի «Զրաշխարհի» վայելքներին տրվելուց, կարող են ճաշել եւ հանգստանալ «Մասադոր», «Կարմեն», «Զրաշխարհ» ռեստորաններում, «Սնեկ» բարում: Մի խոսքով, այստեղ ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի երեւանյան շոգից փախչելու համար պարտադիր չլինի Երեւանից դուրս մեկնել: Բավական է մեկնել «Զրաշխարհ» եւ մոռանալ բոլոր հոգսերը՝ լինի 1, 3 թե 8 օրով: Այնպես որ, շտապեք եւ պատվերների ու հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք «Վալենսիա տուր» գործակալություն՝ 56-40-63, 56-49-99 հեռախոսահամարներով:

# Սկանվորդ

1


2


Սուրհանդակ, ...
Պետություն Վեստ Ինդիայում
ՌԴ «ինքնաեռային» քաղաք
Տաջիկստանի մայրաքաղաքը
Մամուռի «սաղմը»
Բանվորական խումբ
Դեմքին քսած սնգույր
3
Այծյամածին յուղանյութ
Ուժերի լարում
Արցախյան հնագույն կրթօջախ
«Կինը ..., մայրն արեգակ»
«Ակնոցային» ֆիզիկա
Եւ լուսնագնաց, եւ «ջագիստ»
Գինին «այծի» մեջ
Ամերիկացու մականունը
Դրանով ջուր չես կրի
Հիսուսը նրան կենդանացրեց
Սուլթանական գեներալ
Զինված ...
Փոքր թենիս սեղան, մեծ ...
Խնկո-Ապոր անվան, Հանրային
Օդու «բուրումնավետ հումքը»
«Աննշան» կետադրական նշան
Տ-54-ի Տ-ն
Ճապոնական «կարպետ»
Բարոկկո, ..., կլասիցիզմ
Ծավալաչափ պապկե անոթ
Վրան, քողտիկ, հյուղակ
Գունախաղ
Ծառերին «հետեւող» մարդ
Գործի կատարյալ տապալում
Ջրահրամանատար Բժշկյանը
Ծիսական մեծ մոմ
Բաբելոնի բնիկը
Թմրադեղ «սկսնակի» համար
Ցորենով լի հողատարածք
Մորգեի այբուբենի միավոր
«Հաստագլուխ» գավազան
Մաուգլի, Շերխան
Զարկերակներից գլխավորը

3


Գյուտարար
«Թռչնանուն» վարդագցի
Նոր տարի
Վրա
Տուն, որջ, ...
Ամազոնյան կոկորդիլոս
Կմախք, գլուխ
Բրիջ, պոկեր, պրեֆերանս, ...
Շամպայնի «հրթիռը»
«Ողջեր եւ մեռածներ» գրող
Նույնն է լինում թե ...
Կամբոջայի դրկիցը
36 դյույմ
Երկյուղ, ահ, ...
5
Օրգանիզմի «պոմպը»
2
..., ժանիք, սեղանատամ
Կինը ամուսնումահից հետո
Դերասանուհի Վանեսա ...
«Արծաթանուն» երկիր
Զինվորական
4
Սարո Անուշ, Կարո ...
Ծնողական սեր չտեսած
Կիրսան Իլյումժինով, շախմատ
Մեր «ամպագոռգոռ» գետը
«Ամենադրական» բառը
Ոլորապտույտ ծովածոց
Իսրայել ...
Կապում է մկանը ոսկորին
Դեռ քաղելու ժամանակը չէ
«Բանկերի սարսափ» Սիմոնը
Բուժքրոջը «սազական» գործիք
Թերակղզի նահանգ ԱՄՆ-ում
Եվգենի Օնեգին, Տատյանա ...
Շեն տան գրավական
Մեջքը ծռող «պատուհաս»
Սոճու պտուղը
Նովել, պատմվածք, ...
Քվանտային ֆիզիկայի «կնքահայրը»
Լուսանկարչի աշխատավայրը
Անյուղ, «դիետիկ» ճաշ
Ներքող
... մոլոր ճանապարհ
Տատիկի «ճախարակը»

4


Տոր
Ամբողջի «կտոր»
«Տապակա» թռչուն
Եւ չափ, եւ գին, եւ տոկոս
Լուիս Քերոլի հերոսուհին
Երկանդամ
1
Լատիներեն սեր
Պրոմեթեւսի նվերը մարդկանց

5


